ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դավիդյան Դավիթ Բարիսի

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության քրեաիրավական և քրեաբանական հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում

ԺԲ.00.05. - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտության իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Давидян Давид Барисович

Уголовно-правовые и криминологические проблемы убийства государственного, политического или общественного деятеля в Республике Армения

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05. - ‘ Уголовное право и криминология, уголовно-исполнительное право’

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ծ. Ծաղիկյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ **Լ.Զ. Թադևոսյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Ք.Ռ. Թումանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի մայիսի 14-ին ժամը 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան 0051, Հովսեփ Էմինի փող. 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թվականի ապրիլի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտ թեկնածու՝ Ջ.Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **С.Ш. Цагикян**

Оффициальные оппоненты: доктор юридических наук, доцент **Л.З. Тадевосян**

кандидат юридических наук **К.Р. Туманян**

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 14-ого мая 2016 г. в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 13-ого апрелья 2016г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. Հայաստանի Հանրապետության քրեական քաղաքականության առաջնահերթություններից է անձի, հասարակության և պետության անվտանգության պաշտպանությունը՝ հանցավոր ոտնձգություններից:

Մեզանում իրականացված «սահմանադրական փոփոխությունների արդյունքում,- նշել է ՀՀ Նախագահը,- Հայաստանի քաղաքական համակարգը կդառնա առավել բաց, ճկուն և ներքուստ բարդ: Այն կհամապատասխանի մեր հասարակության դինամիկ և բազմակողմանի զարգացող սոցիալական կառուցվածքին»[1]:

Այս առումով, ինչպես նշված է «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի կարգադրության մեջ, մասնավորապես նշված է, որ անհրաժեշտ է ընդունել «Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգիրքը» և «Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նոր հայեցակարգը», քանի որ գործող քրեական օրենսգրքում առկա են բազմաթիվ օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ[2]: Նշված դիտողությունը, մեր կարծիքով, վերաբերում է նաև «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության» (ՀՀ. քր. օր.-ի հոդված 305) քրեական նորմով նախատեսված հանցակազմին, հետևաբար նաև դրա քրեաիրավական որակման հիմնախնդիրներին:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունն ուղղված է սահմանադրական կարգի և պետության անվտանգության դեմ, հետևաբար նաև՝ պետական իշխանության, հասարակության բնականոն գործունեության, սոցիալ-տնտեսական համակարգի, ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ու ազատությունների դեմ:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է հանդիսանալ նաև քաղաքական մրցակիցներից ձերբազատման, ներքին և արտաքին քաղաքականության փոփոխման, իշխանության զավթման և քաղաքական սադրանքի միջոց:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության կատարման ժամանակ հանցավորը ոտնձգում է, ոչ միայն սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության, այլ նաև մարդու կյանքի դեմ, որով էլ պայմանավորված է այս հանցագործության առավել մեծ հասարակական վտանգավորության աստիճանը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության վտանգավորության աստիճանը կասկած չի հարուցում, որի կատարման հետևանքով կարող է լուրջ վնաս հասցվել ազգային անվտանգության արժեքներին, ինչով էլ պայմանավորված է այս հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգիրքը այն դասում է առանձնապես ծանր հանցագործությունների թվին, և նախատեսում է առավել խիստ պատժատեսակներ, այն է՝ ազատազրկումը

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 13 փետրվար 2016, թիվ 25(6307):
[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն պաշտոնական տեղեկագիր, N33 (907), 11 հուլիսի 2012:

տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածը

հանդիսանալով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի քրեաիրավական պաշտպանության միակ միջոց, հաճախակի չի կիրառվում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2003 թվականից մինչև 2015 թվականը եղել է գրանցված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության ընդամենը 7 դեպք:

Գրանցված դեպքերի քանակը ըստ տարիների և ամիսների հետևյալն է՝ 2003, 2004, 2005, 2009, 2010 թվականներին մեկական պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն, 2008թ.՝ 2 դեպք: 2006, 2007, 2011, 2012, 2013, 2014, 2015 թվականներին դեպքեր չեն արձանագրվել:

Անհրաժեշտ է նշել, որ պաշտոնական վիճակագրական տվյալները չեն արտացոլում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների ամբողջական պատկերը: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ նույնիսկ 305-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության դեպքում կատարված հանցավոր արարքը հաճախակի գնահատվում է որպես կյանքի դեմ ուղղված հանցագործություն և որակվում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, որի հիմնական պատճառը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի մեկնաբանության մեջ հստակ մեկնաբանված չէ, թե ինչ պետք է հասկանալ ասելով՝ «պետական գործիչ», «քաղաքական գործիչ», «հասարակական գործիչ»: Բացի դրանից դժվարություններ են առաջանում նաև «պետական գործիչ», և «իշխանության ներկայացուցիչ» հասկացությունների սահմանազատման ժամանակ, խոչընդոտ հանդիսանալով օրենքի միատեսակ ըմբռնման և կիրառման հարցում, որն էլ իր հերթին իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է ոչ ճիշտորակումների:

Հարկ է նշել նաև, որ հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի վերաբերյալ համալիր ուսումնասիրություններ չեն կատարվել: Հաշվի առնելով նաև գործող քրեական օրենսդրական բացերը և թերի իրավակարգավորումները՝ կապված մասնավորապես քննարկվող հիմնախնդրի հետ, գտնում ենք, որ հրատապ արդիական է ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածի հանցակազմի գիտական հետազոտությունը:

Թեմայի գիտական մշակվածության վիճակը. Հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ անձի քրեաիրավական անվտանգության պաշտպանության վերաբերյալ համակողմանի հետազոտություններ են իրականացրել իրավաբանական գիտությունների դոկտորներ՝ Ս.Վ. Առաքելյանը, Ա.Հ. Գաբուզյանը, Ս.Ծ. Ծաղիկյանը, Ա.Գ. Հովսեփյանը, Ա.Ա. Թամազյանը, Լ.Զ. Թադևոսյանը, Ա.Տ. Թովմասյանը, իրավագիտության թեկնածուներ Ք.Ռ. Թումանյանը Մ.Վ. Գրիգորյանը և այլոք:

Հետազոտության թեման առավել համակողմանի ուսումնասիրված է ռուս գիտնականների՝ Գ.Զ. Անաշկինի, Գ.Ա. Ավանեսովի, Ա.Ի. Ալեքսևի, Յու.Մ. Անտոնյանի, Դ.Ի. Բոգատիկովի, Ի.Ա. Բուշուեվի, Ա.Ա. Գերցենզենի, Ս.Վ. Դյակովի, Վ.Պ. Եմելյանովի, Լ.Դ. Երմակովի, Ն.Ի. Զագորոդնիկովի, Ա.Ն. Իգնատովի, Ա.Ա. Իգնատևի, Մ.Պ.

Կարպուշինի, Վ.Ա. Կլյագինի, Ա.Պ. Կուզնեցովի, Բ.Ա. Կուրինովի, Վ.Ի. Կուրլյանսկիի, Վ.Ի. Միխայիլովի, Վ.Դ. Մենշագինի, Դ.Ա. Սավչենկոի, Ե.Ա. Սմիրնովայի, Մ.Վ. Տուրեցկիի, Ա.Յու. Շումիլովի, Օ.Ս. Կապինուսի, Ի.Գ. Նեդելինի, Յու.Ե. Պուդովոչկինի, Ա.Վ. Սեդիխի, Ա.Ու. Դիկաևի, Ա.Ի. Դոլգովայի, Յու.Ս. Գորբունովի, Վ.Վ. Լունեևի, Մ.Ի. Ալինկոի, Պ.Ա. Կաբանովի, Ի.Մ. Կլեիմենովի, Ա.Ֆ. Կուլակովի, Վ.Վ. Ուստինովի և այլ հեղինակների աշխատություններում: Բարձր գնահատելով վերոնշված հեղինակների նշանակալից ներդրումը քննարկվող հանցակազմի քրեաիրավական հետազոտության հարցում, այդուհանդերձ պետք է նշել նաև, որ ոչ բոլոր խնդիրներն են ստացել վերջնական լուծում, և բազմաթիվ հարցեր մնացել են տեսական հետազոտության շրջանակներից դուրս:

Այս առումով, սույն ատենախոսական հետազոտությունը կոչված է մասամբ լրացնելու այդ բացը, հատկապես, որ Հայաստանի Հանրապետությունում քննարկվող հանցակազմի վերաբերյալ համակողմանի գիտական հետազոտություն չի իրականացվել:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Սույն ատենախոսական հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ. քր. օր.-ի 305 հոդվածով նախատեսված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի համակողմանի քրեաիրավական վերլուծության արդյունքների հիման վրա մշակել գիտականորեն հիմնավոր առաջարկություններ՝ կատարելագործել վերոնշված քրեաիրավական նորմը և բարելավել իրավակիրառական պրակտիկան:

Նշված նպատակին հետամուտ՝ աշխատանքում փորձ է արվել լուծել հետևյալ **խնդիրները.**

– բացահայտել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացությունը և քրեաիրավական բնույթը,

– վերլուծել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները,

– հետազոտել քննարկվող հանցակազմի հանրորեն վտանգավորությունը պայմանավորող գործոնները,

– բացահայտել պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի որակման առանձնահատկությունները,

– մշակել գործնական բնույթի առաջարկություններ նշված քրեաիրավական նորմի կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի բարելավման համար,

– գիտականորեն հիմնավորված առաջարկություններ մշակել նշված հանցագործության պատճառների բացահայտման և կանխարգելման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Սույն ատենախոսական աշխատանքի **_օբյեկտն է** պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի քրեաիրավական և քրեաբանական հատկանիշների համալիր ուսումնասիրությունը և իրավահարաբերությունները:

Հետազոտության **առարկան** պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի քրեաիրավական հատկանիշների բացահայտումն է, ինչպես նաև այդ հանցագործության համար նախատեսված պատասխանատվության քրեաիրավական նորմի կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի բարելավման և նշված հանցագործությունների կանխարգելման հետ կապված հիմնահարցերի

խորքային ուսումնասիրություն է:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները. Սույն ատենախոսական աշխատանքի ընթացքում օգտագործվել են համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, համակարգային-կառուցվածքային, ձևական-տրամաբանական, իրավաբանական վերլուծության, համակարգային վերլուծության, քրեաբանական և գիտական մեկնաբանության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմում հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ մասնավորապես՝ Ս.Ս. Ավետիսյանի Ս.Վ. Առաքելյանի, Ա.Հ. Գաբուզյանի, Մ.Վ. Գրիգորյանի, Ա.Ա. Թամազյանի, Լ.Զ. Թադևոսյանի, Ա.Տ. Թովմասյանի, Ս.Ծ. Ծաղիկյանի, Ա.Գ. Հովսեփյանի, Յու.Մ. Անտոնյանի, Գ.Զ. Անաշկինի, Գ.Ա. Ավանեսովի, Ա.Ի. Ալեքսևի, Ս.Վ. Բորոդինի, Յու.Մ. Բրայնինի, Լ.Դ. Գաուֆմանի, Պ.Ս. Դագելի, Ա. Լ. Դվորկինի, Պ.Գ. Իվանովի, Վ.Ն. Կուդրյավցևի, Ն.Փ. Կուզնեցովայի, Ա.Է. Ժալինսկու, Ի.Ի. Կարպեցի, Ս.Գ. Կելինայի, Վ.Մ. Կոգանի, Ա.Ի. Կորոբեերի, Գ.Վ. Կրիլովի, Բ.Ա. Կարինովի, Ա.Վ. Նաումովի, Ա.Ա. Պիոնտկովսկու, Պ.Ս. Տոբոլկինի, Ա.Ն. Տրայնինի, Մ.Դ. Շարգորոդսկու, Վ.Դ. Ֆիլիմոնովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության մեջ որպես տեսական հիմք են ծառայել նաև վերջին տարիներին հայրենական և ռուս գիտնականների ատենախոսական աշխատանքները, որոնք այս կամ այն կերպառնչվել են սույն հետազոտության թեմայի հետ[3]:

Հետազոտության նորմատիվ և փորձառական հիմքերը:

Սույն ատենախոսական աշխատանքի համար նորմատիվ հիմք են հանդիսացել՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, այլ իրավական ակտեր և պաշտոնական փաստաթղթեր, մասնավորապես «Դատական բարեփոխումների ծրագիրը», «ՀՀ Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգը» և այլն:

Աշխատանքի համար որպես փորձառական հիմք են հանդիսացել դատական պրակտիկայի նյութերը և պաշտոնական վիճակագրական տվյալները:

Հետազոտության գիտական նորույթը ամենից առաջ, կայանում է նրանում, որ հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ առաջիններից մեկն է, որ իրականացվել է համալիր մենագրական հետազոտություն՝ կապված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի քրեաիրավական հատկանիշների բացահայտման և այդ հանցագործության հանրային վտանգավորության սոցիալ-իրավական կողմերի պարզաբանման հետ:

Աշխատանքում ձևակերպվել են գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, որոնք ուղղված են պետական, քաղաքական կամ հասարակական գործչի անվտանգության ապահովման նպատակով՝ գործող քրեաիրավական նորմի դիսպոզիցիայի և սանկցիայի բովանդակության որոշակիացմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում այդ հանցակազմի որակման հետ

---

[3] Տե՛ս **Թամազյան Ա.Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները (տեսական և կիրառական վերլուծություն): Սեղմագիր, իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012; Նաև՝ **Թումանյան Ք.Ռ.** Ահաբեկչության համար պատասխանատվության քրեաիրավական կարգավորումը. վիճակը, հիմնախնդիրները, միտումները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2007:

կապված հիմնավորումների բարելավմանը:

Բացի դրանից, որպես գիտական նորույթ, աշխատանքում առաջադրված է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության շարժառիթների հեղինակային դասակարգումը, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի ինքնատիպ լուսաբանման մոտեցումները, ինչպես նաև տվյալ հանցագործության կանխարգելման հետ կապված քրեաբանական ասպեկտների համակողմանի վերլուծությունը:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305 հոդվածը պատասխանատվություն է սահմանում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության համար, որը կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով: Այս հանցագործությունը երկօբյեկտ հանցագործություն է. հանցագործության օբյեկտ են հանդիսանում ՀՀ սահմանադրական և հասարակական կարգը, քաղաքական և իրավական համակարգը, իշխանության իրավական և սոցիալական լեգիտիմության հիմքերը և պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքը: Վերջիններս կարող են խախտվել նաև այն դեպքում, երբ ոտնձգության օբյեկտ կարող են լինել ոչ միայն բուն պետական, քաղաքական և հասարակական գործչի կյանքը, այլև նրանց մերձավոր հարազատների (ամուսին, երեխաներ, ծնողներ) կյանքը: Այս առումով, առաջարկվում է հոդվածի վերնագրում և դիսպոզիցիայում ավելացնել «մերձավոր հարազատների սպանությունը»:

Հետևաբար, գտնում ենք, որ քննարկվող հանցագործությունից տուժողներ կարող են լինել ոչ միայն պետական, քաղաքական կամ հասարակական գործչի, այլ նաև վերջիններիս մերձավոր հարազատների սպանությունը:

2. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի առողջությանը ծանր վնաս պատճառելը (եթե հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել դրան և ոչ թե կյանքից զրկելուն) հանցակազմը քրեական օրենսդրությունից բաց է մնացել: Այս առումով ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն չի սահմանում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի, ինչպես նաև նրանց մերձավորների առողջության դեմ ուղղված ոտնձգությունների համար, որը կարելի է համարել օրենսդրական լուրջ բացթողում:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական պատասխանատվություն է սահմանվում անձի կամ նրա մերձավորի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության, կամ հասարակական պարտքի կատարման հետ, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նույն անձանց առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար, 316-րդ հոդվածի 1-ին մասով իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրման սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման հետ, 396-րդ հոդվածով միջազգային պաշտպանությունից օգտվող օտարերկրյա պետության ներկայացուցչի, կամ միջազգային կազմակերպության

աշխատակցի, կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների, ինչպես նաև միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց ծառայողական կամ բնակելի շենքերի կամ տրանսպորտային միջոցների վրա հարձակվելու համար. եթե այդ գործողությունները կատարվել են պատերազմի սադրանքի կամ միջազգային հարաբերությունները բարդացնելու նպատակով, իսկ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կամ նրանց մերձավորների առողջության դեմ ուղղված ոտնձգությունների պարագայում այն բացակայում է:

4. Օրենսդրական հակասությունների վերացման և բացերի լրացման համար անհրաժեշտ ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 28-րդ գլխում ավելացնել նոր հոդված՝ 305[1], հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 305[1]. Պետական կամ հասարակական գործչի նկատմամբ բռնություն գործադրելը.

1) պետական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրանց կողմից իրականացվող պետական, քաղաքական կամ հասարակական գործունեության հետ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից ինը հարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2) սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց նկատմամբ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրանց կողմից իրականացվող պետական, քաղաքական կամ հասարակական գործունեության հետ՝ պատժվում է ազատազրկմամբ վեցից տասներկու տարի ժամկետով»:

5. Իրավակիրառ պրակտիկայում արարքի ճիշտ որակման համար անչափ կարևոր է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի հստակ բնորոշումը, որը չի դառնա բազմակարծության և վիճաբանության պատճառ, և կհանգեցնի օրենքի միատեսակ ըմբռնման և կիրառման: ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան բլանկետային է, պետական, քաղաքական պաշտոնների մասին հստակ ձևակերպում ունենալու և արարքի ճիշտ որակման համար անհրաժեշտ է ղեկավարվել Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայության մասին օրենքի 4-րդ հոդվածով:

6. Օրենքի որոշակիության և հստակության համար անհրաժեշտ ենք համարում փոփոխել քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան և շարադրել հետևյալ կերպ՝

Հոդված 305. Պետական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի սպանությունը:

Պետական կամ հասարակական գործչի կամ նրա մերձավորի սպանությունը, որը կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով, կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության համար, պատժվում է ազատազրկմամբ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

7. Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգը անդրադարձ է կատարում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմին՝ որտեղ առաջարկվում է այն դուրս բերել պետական անվտանգության և

սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների գլխից և դիտարկել որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն: Հեղինակի կարծիքով նման մոտեցումը այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության դրդապատճառը, շարժառիթը, նպատակը քաղաքական են, այլ ոչ թե անձնական կամ կենցաղային բնույթի:

8. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմը էականորեն սահմանազատվում է ահաբեկչության հանցակազմից հետևյալով, եթե պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության երկօբյեկտը ներառում է անձի կյանքը և սահմանադրական կարգը և քաղաքական համակարգը, ապա ահաբեկչության օբյեկտը՝ անվտանգությունն է, պետական իշխանության մարմինների բնականոն գործունեությունը, անձանց կյանքն ու առողջությունն է (այստեղ բացակայում է կոնկրետությունը), այսինքն՝ վտանգը սպառնում է ոչ թե կոնկրետ անձին (իշխանական կամ քաղաքական լիազորություններով օժտված), այլ ցանկացած անձի (ահաբեկչության դեպքում տուժող կարող է հանդիսանալ ցանկացած անձ):

Ուրեմն՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմը ենթադրում է կոնկրետ անձին ապօրինի կյանքից զրկելու հանցավորի ուղղակի դիտավորությունը, միայնչդեռ ահաբեկչության դեպքում անձին կյանքից զրկելը կարող է առաջանալ անզգուշության հետևանքով: Այդ երկու հանցակազմերի սահմանազատումը առկա է նաև սուբյեկտիվ կողմով դրսևորող նպատակից. պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության նպատակը՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի նշված գործունեության դադարեցնելն է, իսկ ահաբեկչության դեպքում՝ հասարակության անվտանգության սպառնում՝ ահաբեկման եղանակով:

9. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքին ոտնձգության պատճառային բազմաշերտությունը, որում միահյուսվում են բռնությամբ կատարվող հանցագործությունների դետերմինանտները, ինչպես նաև հատուկ պայմանների և պատճառներ, որոնք բնորոշ են քննարկվող հանցավոր պարտքի հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն, օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում տարբեր կանխարգելիչ միջոցառումների մշակում և դրանց հաջորդական իրականացում:

Առաջարկվող միջոցառումների <u>առաջին</u> մակարդակը ենթադրում է տվյալ հանցագործությանը նպաստող քրեածին պատճառների (գործոնների) բացահայտում և չեզոքացում:

Կանխարգելիչ միջոցառումների <u>երկրորդ</u> մակարդակը ենթադրում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության «տաք հետքերով» բացահայտում և հանցագործության հետևանքների վերացում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը. Սույն ատենախոսական աշխատանքի տեսական նշանակությունը նրանում է, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հետագա ուսումնասիրողների կողմից, քրեական իրավունքի տեսությունը զարգացնելու նպատակով:

Աշխատանքի գործնական նշանակությունը նրանում է, որ

մշակված եզրակացությունները, առաջարկությունները և հետևությունները կարող են նպաստել քրեական օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ պրակտիկան բարելավելու համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև «Քրեական իրավունք», «Հանցագործությունների գիտական հիմունքներ» առարկաներ և հատուկ դասընթացներ դասավանդելիս:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը. Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի «Քրեական և քրեական դատավարության իրավունքի» ամբիոնում, որտեղ կայացվել է նաև աշխատանքի նախնական քննարկումը և գրախոսումն:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է նրա նպատակով, խնդիրներով, հետազոտության օբյեկտով և առարկայով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտբովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական, մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացությունը և դրասոցիալ-քաղաքական նախադրյալները» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլուխը՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացությունը» վերտառությամբ, հեղինակը բացահայտում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հասկացությունը և էությունը:

Անձի դեմ ուղղված ամենավտանգավոր և ամենածանր հանցագործությունը սպանությունն է, որքանով որ դրա հետևանքով պատճառվում է անդառնալի և անփոխարինելի կորուստ, ոչնչացվում մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող ամենամեծ արժեքը՝ մարդու կյանքը:

Մասնագիտական գրականության մեջ տարակարծություններ կան «պետական գործիչ», «քաղաքական գործիչ» և «հասարակական գործիչ» հասկացությունների վերաբերյալ: Այդ իսկ պատճառով այդ հասկացությունների հստակեցումը ունի ոչ միայն եզրութաբանական-տեսական նշանակություն, այլ նաև զգալի գործնական-կիրառական կարևորություն:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը որոշակի հստակեցում է մտցրել քննարկվող հասկացությունների վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ղեկավար աշխատողների անվանացանկը տրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր մասի 6-րդ հոդվածի 26^1-ի կետով, որի համաձայն վերոհիշյալ մարմիններում ղեկավար աշխատողներ են համարվում՝ ՀՀ Նախագահը, ՀՀ վարչապետը, փոխվարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը և անդամները, ՀՀ դատարանների նախագահները և դատավորները, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը, ՀՀ նախարարները, նրանց տեղակալները, ՀՀ կառավարության առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, ՀՀ մարզպետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, ՀՀ Վերահսկիչ Պալատի նախագահը և խորհրդի անդամները, ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահը և խորհրդի անդամները, ՀԾ կարգավորող հանձնաժողովների ղեկավարները և անդամները, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և անդամները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահը և տեղակալները:

ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսոզիցիան բլանկետային է, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի հստակ բնորոշման համար անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ հանրային ծառայության մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 10-րդ, 13-րդ մասերով:

Այս առումով, առաջարկում ենք քննարկվող հանցագործության հեղինակային գիտական բնորոշումը. «Սահմանադրական կարգը խարխլելու և քաղաքական համակարգը կազմալուծելու նպատակով՝ պետական, քաղաքական, կամ հասարակական գործչի սպանությունը կամ որևէ՝ վերջիններիս մերձավոր հարազատների սպանությունը, որոնք կատարվել են նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով»:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ ‘Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սոցիալ - քաղաքական նախադրյալները փոխակերպվող հասարակությունում’ հեղինակը համակողմանի քննարկում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության նախադրյալները և դրդապատճառները:

Ըստ հեղինակի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սոցիալ-քաղաքական նախադրյալներն են.

– անցումային հասարակությունում տիրող բարդ ու հակասական զարգացումները սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում (այսպես կոչված՝ սոցիալական լարվածությունը).

– հասարակությունում նոր ձևավորվող իրավական, տնտեսական և սոցիալական համակարգերի բարդ գործընթացը և դրանցում հաճախակի կրկնվող սխալները և բացթողումները.

– հասարակությունում «սոցիալական արդարության» բացակայությունը և դրա խեղաթյուրումը.

– ոչ արդյունավետ կառավարումը և կոռուպցիան հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Թվարկված և չթվարկված նախադրյալները ուղղակի կամ անուղղակիորեն նպաստում են հասարակության մեջ սոցիալ-

քաղաքական լարվածության առաջացմանը և նմանատիպ հանցագործությունների կատարմանը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության քրեաիրավական բնութագիրը» վերնագրով բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության օբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ, բացահայտվում է տվյալ հանցագործության օբյեկտը և օբյեկտիվ կողմի հատկանիշները:

Քրեական իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել այն կարծիքը, համաձայն որի հանցագործության օբյեկտեն համարվում հասարակական հարաբերությունները: Ընդ որում, հանցագործության օբյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնց դեմ ուղղվում և որոնց վնաս են հասցնում հանցագործությունները:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով որակելու համար բավարար պայման չէ վերջինիս քաղաքական, պետական կամ հասարակական գործունեությամբ զբաղվելը, այլ անչափ կարևոր է, որ նրանց համապատասխան գործունեությունները լինեն ծավալված օրենքի և օրինականության շրջանակներում, բխեն սահմանադրության և այլ օրենքների պահանջներից: Այն դեպքում, երբ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կատարվում է նրա հակաիրավական գործունեությունից առաջացած վրեժի շարժառիթով, ապա այն պետք է որակել ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, որպես հասարակ սպանություն, այլ ոչ որպես պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն: ՀՀ Քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործիչը գործի օրենքի խստիվ պահանջների համապատասխան, նրա գործունեությունը ուղղված լինի պետության զարգացմանն ու անվտանգության ապահովմանը և հասարակական այլ արժեքների պահպանմանը: Այսպիսով կարող ենք նշել, որ արարքը քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով որակելու համար բավական չէ միայն տուժողի քաղաքական գործունեությամբ զբաղվելու հանգամանքի առկայությունը, այլ շատ կարևոր նշանակություն ունի դրդապատճառը, շարժառիթը և այլ հանգամանքներ: Որքան էլ որ հանցավորի համար ակնհայտ լինի անձի պետական իշխանության բարձրագույն մարմիններում բարձր պաշտոն զբաղեցնելու փաստը, սակայն եթե սպանությունը կատարվել է խանդի, կենցաղային վիճաբանությունից առաջացած վրեժի շարժառիթով, ապա արարքը պետք է որակվի քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, որպես հասարակ սպանություն:

Եթե պետական, քաղաքական կամ հասարակական գործիչը ակնհայտ հղի կին է, ապա նրա սպանության դեպքում նույնպես արարքը պետք է որակել քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համակցությամբ:

Եթե պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կատարվում է զուգորդված՝ վերջինիս առևանգմամբ կամ պատանդ վերցնելով, ապա այս դեպքում նույնպես արարքը պետք է որակել քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համակցությամբ:

Եթե պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կատարվել է երկու համակատարների կողմից՝ որից մեկը գործել է կենցաղային կոնֆլիկտից ծագած վրեժի շարժառիթով, իսկ մյուսի նպատակը նրա պետական, քաղաքական կամ հասարակական գործունեությունը դադարեցնելն է եղել, ապա այս պարագայում՝ մեր կարծիքով, առաջինի դեպքում արարքը անհրաժեշտ է որակել 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, իսկ մյուսի պարագայում 305-րդ հոդվածով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համակցությամբ:

Նույն բերված օրինակով, եթե այն համակատարը, որը գործել է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի գործունեությունը դադարեցնելու նպատակով, եղել է 16 տարին չլրացած, ապա այս դեպքում արարքը պետք է որակել միայն 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

Հանցագործության օբյեկտիվ կողմը որոշակի պայմաններում, տեղում և ժամանակահատվածում ընթացող և քրեաիրավական պաշտպանության համապատասխան օբյեկտներին վնաս պատճառող հանրորեն վտանգավոր ոտնձգության արտաքին դրսևորումն է:

Յուրաքանչյուր հանցագործության օբյեկտիվ կողմը բնորոշում են օրենքով պաշտպանվող օբյեկտի նկատմամբ ոտնձգության արտաքին ձևերը, որոնք արտահայտում են սուբյեկտի նպատակներն ու մտադրությունները:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունը դասվում է այն հանցագործությունների շարքին, որոնք ունեն նյութական կազմ: Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305 հոդվածի՝ հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ գործողության վերջնական պահը պայմանավորված է նշված հոդվածի դիսպոզիցիայում դրա նկարագրությամբ: Այն է պետական, քաղաքական կամ հասարակական գործչին կյանքից զրկելը: Օրենսդիրը մատնանշել է՝ «հետևանքների վրա հասնելը որպես ինքնուրույն և բավարար հիմք՝ վերջնական հանցագործության ճանաչման համար» պարտադիր համարելով հետևանքի առաջացումը:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ հատկանիշները» վերնագրով, հանգամանորեն վերլուծության են ենթարկվում տվյալ հանցագործության սուբյեկտիվ հատկանիշները՝ սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը:

Հանցագործությունն անհնար է առանց կատարող անձի: Այդ պատճառով հանցակազմի պարտադիր տարրերից է հանցագործության սուբյեկտը, առանց որի քրեական պատասխանատվությունը բացառվում է: Քրեական օրենքը «հանցագործության սուբյեկտ» և «հանցագործ» հասկացությունների հետ միաժամանակ օգտագործում է նաև «հանցանք կատարած անձ», «դատապարտյալ» և այլ հասկացությունները: Հանցագործության սուբյեկտն ընդհանուր իմաստով հանցանք կատարած անձն է, այսինքն՝ հանցագործը:

Նշենք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարում նաև նպատակը, որը այլ հանցակազմերում համարվում է ֆակուլտատիվ հատկանիշ: Եվ այսպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներն են՝ շարժառիթը, նպատակը, հույզերը: Սուբյեկտիվ կողմի այս հատկանիշները առկա են ոչ բոլոր հանցակազմերում:

Սակայն, դա չի նշանակում, որ հանցագործությունը կարող է կատարվել առանց շարժառիթի, նպատակի կամ հույզերի: Մարդկային յուրաքանչյուր արարք, այդ թվում հանցագործությունը, կատարվում է որոշակի շարժառիթներով, որոշակի նպատակի հասնելու համար և անպայման ուղեկցվում է հույզերով: Պարզապես, ոչ բոլոր հանցագործությունների դեպքում է, որ այս հատկանիշները իրավաբանական նշանակություն ունեն: Իսկ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության պարագայում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ նպատակը ունի կարևորագույն իրավաբանական նշանակություն, չնայած նրան, որ այն համարվում է հանցակազմի ֆակուլտատիվ հատկանիշ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը համաեռ հանցակազմերից և դրանց որակման առանձնահատկությունները» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը՝ անձի կամ նրա մերձավորի սպանությունից՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ» վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն վերլուծում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը՝ անձի կամ նրա մերձավորի սպանությունից՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ:

Այս հանցագործությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Օրենսդիրն այն դասում է ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների շարքը՝ նկատի ունենալով հանցավորի գործողությունների անմիջական կապը և պայմանավորվածությունը տուժողի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման, այսինքն՝ գործող օրենսդրությանը չհակասող այնպիսի օգտակար արարքի կատարման հետ, որը մի դեպքում պայմանավորված է անձի, ցանկացած աշխատողի օրինական պարտականությունների կատարման, մյուս դեպքում՝ ցանկացած անձի կողմից հանրորեն օգտակար ամեն մի արարքի կատարման հետ: Նշված սպանությունը կատարվում է անձի ծառայողական գործունեությունը կամ հասարակական պարտքը կատարելուն ուղղված իրավաչափ գործունեությունը խոչընդոտելու նպատակով կամ այն կատարելու կապակցությամբ առաջացած վրեժի շարժառիթով: Այս հանցագործությամբ հանցավորը ոտնձգում է ինչպես անձի կյանքի, այնպես էլ այն - հասարակական հարաբերությունների դեմ, որը երաշխավորում և ապահովում է անձի ծառայողական գործունեությունը կամ հասարակական պարտքի կատարումը:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը ահաբեկչությունից» վերտառությամբ, քննարկվում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սահմանազատումը ահաբեկչությունից:

Արդի ժամանակաշրջանի համար ահաբեկչությունը դարձել էր սպառնալիք ոչ միայն ազգային հետաքրքրությունների կամ որևէ այլ առանձին պետության անվտանգության հանդեպ, այլ նաև ընդհանուր համաշխարհային հանրության համար: Ահաբեկչությունը մնում է ամենասուր ժամանակակից խնդիրներից մեկը: Իր կործանարար ազդեցությամբ ահաբեկչությունը շոշափում է յուրաքանչյուր պետության հասարակական կյանքի բոլոր հիմնական ոլորտները: Այն վտանգի է ենթարկում պետությունների խմբերի և առանձին պետությունների միջև փոխհարաբերությունների կայունությունն ու խաղաղ բնույթը, հանդես է գալիս որպես «կատալիզատոր» վտանգավոր միջազգային կոնֆլիկտների հրահրման ժամանակ, ոչնչացնում է դրանց կարգավորման բոլոր ջանքերը, առաջացնում է լարվածություն:

Միջազգային ոլորտում ահաբեկչությունը դարձել է ձևավորված միջազգային կանոնակարգի, մարդու և քաղաքացու իրավունքների քայքայման, ինքնավար պետության ներքին կյանքի միջամտության գործիք: Նորմը, որը նախատեսում է պատասխանատվություն ահաբեկչության համար, տեղակայված է «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների» 23-րդ գլխում: Տվյալ հանցագործության համար պատասխանատվությունն է նախատեսվում ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով:

ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված՝ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն է հանդիսանում հասարակական անվտանգությունը: Հասարակական անվտանգությունն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների համախումբ, որը կարգավորում է հասարակության կյանքի անվտանգ պայմանները, «անձանց անորոշ խմբերի, կազմակերպությունների և նյութական օբյեկտների, կենսական կարևոր հետաքրքրությունների պաշտպանվածությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Եթե որպես ահաբեկչական գործողության օբյեկտ հանդես է գալիս հասարակական անվտանգությունը, ապա պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության օբյեկտներ են հանդիսանում ՀՀ քաղաքական համակարգն ու պետության անվտանգությունը (հիմնական) և մարդու կյանքը (լրացուցիչ):

Եվ ահաբեկչական գործողության (ՀՀ քր. օր-ի 217 հոդված), և պետական կամ հասարակական գործչի կյանքի հանդեպ ոտնձգության (ՀՀ քր. օր-ի 305-րդ հոդված) օբյեկտիվ կողմը իրականացվում է գործողությունների միջոցով: Սակայն, դրանց կատարման համընդհանուր վտանգ ներկայացնող մեթոդը հանդիսանում է միայն ահաբեկչական գործողության կոնստրուկտիվ հատկանիշ:

Աշխատանքի չորրորդ գլուխը՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության քրեաբանական հիմնախնդիրները» բաղկացած է երկու ենթագլխից: **Առաջին ենթագլխում՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության պատճառների հիմնախնդիրները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության դրդապատճառների հետ կապված հարցերը:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների կանխարգելման

հիմնահարցերը» վերնագրով, հեղինակը համակողմանի ներկայացնում է քննարկվող, ինչպես նաև նշված հանցագործության կանխարգելման հետկապված հիմնահարցերը:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ **եզրակացություններին.**

1. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը համարվում է հանցագործությունների մասին ուսմունքի հիմնախնդիրներից մեկը և անխուսափելիորեն կապված է քրեաիրավական պաշտպանության ամրապնդման հետ: Քրեաիրավական պաշտպանության ամրապնդման համար կարևորում ենք հոդվածի դիսպոզիցիայում առկա թերությունների վերացումն ու բացթողումների լրացումը: Ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսդրության կիրառման պրակտիկան՝ կապված պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի հետ, կարող ենք նշել, որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության խնդիրները խիստ արդիական են և կարևոր նշանակություն ունեն պետության անվտանգության ապահովման և սահմանադրական կարգի պահպանման համար: Պետության անվտանգության ապահովումն ու սահմանադրական կարգի պահպանումը անհերքելի պայման են պետության կայունության և հասարակության բնականոն զարգացման համար:

2. Ուսումնասիրելով քաղաքական սպանությունների դինամիկան կարող ենք հստակ նշել, որ սպանությունների կանխարգելման կամ նվազեցման համար կարևոր նշանակություն ունի պետական, քաղաքական կամ հասարակական գործիչների պաշտպանության հարցը: Պաշտպանություն ասելով անհրաժեշտ է հասկանալ և անվտանգության ապահովումը, և քրեաիրավական պաշտպանությունը: Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի քրեաիրավական պաշտպանությունը կարող ենք համարել քաղաքական սպանությունների կանխարգելման հիմնական միջոց: Իսկ քրեաիրավական պաշտպանության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունի համապատասխան նորմի կատարելագործումն ու արդիականացումը: Նորմի կատարելագործման համար անհրաժեշտ պայման է բացերի լրացումն ու թերությունների վերացումը, իսկ արդիականացում ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ նորմի համապատասխանեցումը՝ արդի ժամանակաշրջանի իրավահարաբերությունների պահանջներին: Նշենք նաև, որ հասարակությունը զարգանում է պարբերաբար մարդու կամքից անկախ, հասարակության զարգացման հետ մեկտեղ պետք է զարգանա նաև իրավունքը:

3. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությամբ խախտվում է ժողովրդի ինքնիշխանությունը, այն է՝ իշխանության իրականացումը, հասարակության մեջ առաջացնելով դժգոհություններ և անվստահություն իշխանության հանդեպ: Ինչպես նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է հանդիսանալ քաղաքական մրցակիցներից ձերբազատման, ներքին և արտաքին քաղաքականության փոփոխման իշխանության զավթման, և քաղաքական սադրանքի միջոց: Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության կատարման ժամանակ հանցավորը ոտնձգում է, ոչ միայն սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության, այլ նաև մարդու

կյանքի դեմ, որով էլ պայմանավորված է այս հանցագործության առավել մեծ հանրային վտանգավորությունը:

4. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության վտանգավորության աստիճանը կասկած չի հարուցում, որի կատարման հետևանքով կարող է լուրջ վնաս հասցվել ազգային շահերին, և դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը այն դասում է առանձնապես ծանր հանցագործությունների թվին, և նախատեսում է առավել խիստ պատժատեսակներ, այն է՝ ազատազրկումը տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում: Ազգային շահ ասելով անհրաժեշտ է հասկանալ՝ անձի, հասարակության, պետության պաշտպանվածության վիճակը ներքին և արտաքին սպառնալիքներից և բարեկեցիկ կյանքի ապահովումը: Որը թույլ է տալիս ապահովել՝ անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, կյանքի որակը և տևողությունը, ժողովրդի ինքնիշխանությունը, զինված ուժերի պահպանումը պետության անվտանգությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը և տնտեսության բնականոն զարգացումը: Նշենք նաև, որ ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներից է հանցավոր, կազմակերպված խմբերի և առանձին անձանց հանցավոր ոտնձգությունները՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի տապալման և պետական իշխանության բարձրագույն մարմինների կանոնավոր գործունեության դեմ: Այդ սպառնալիքների թվին է պատկանում նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը, ուղղված սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ:

5. Կատարելով պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի խորը և բազմակողմանի հետազոտություն, եկանք այն եզրահանգման, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի հանցակազմի մեկնաբանության մեջ հստակ մեկնաբանված չէ, թե ինչ պետք է հասկանալ ասելով. «Պետական գործիչ», «Քաղաքական գործիչ», «Հասարակական գործիչ»: Բացի դրանից դժվարություններ են առաջանում նաև «Պետական գործիչ» և «Իշխանության ներկայացուցիչ» հասկացությունների սահմանազատման ժամանակ, խոչընդոտ հանդիսանալով օրենքի միատեսակ ըմբռնման և կիրառման հարցում, որն էլ իր հերթին հանգեցնում է արարքի սխալ որակման: Նշենք նաև, որ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան քրեաիրավական պաշտպանություն չի նախատեսում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի մերձավորների կյանքի և առողջության համար, առանց քրեաիրավական պաշտպանության է մնում նաև պետական, քաղաքական կամ հասարակական գործչի առողջությանը:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարելով գործունեությունը դադարեցնելու նպատակը լիարժեք քրեաիրավական պաշտպանություն չի ապահովում պետական, քաղաքական կամ հասարկական գործչի համար: Քանի որ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է կատարվել նաև քաղաքական կոնֆլիկտի հետևանքով առաջացած վրեժի շարժառիթով, կամ վրեժի շարժառիթից ելնելով նշված գործունեության իրականացման համար: Օրենսդրական

թերությունների վերացման համար անհրաժեշտ ենք համարում հոդվածի դիսպոզիցիայում ավելացնել հետևյալ նախադասությունը՝ «կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության համար» և շարադրել հետևյալ կերպ՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը, որը կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով կամ վրեժի շարժառիթից ելնելով այդպիսի գործունեության համար:

7. ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն չի նախատեսում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի, ինչպես նաև նրա մերձավորների առողջության դեմ ուղղված ոտնձգությունների համար, որը կարելի է համարել օրենսդրական լուրջ բացթողում: Անհրաժեշտ ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ բաժնի 28-րդ գլխում համապատասխան հանցակազմի ամրագրումը:

Նշված թերությունների վերացումն ու բացթողումների լրացումը՝ անհրաժեշտ պայման են պետական, քաղաքական կամ հասարակական գործչի քրեաիրավական պաշտպանության բարձրացման համար, և անխուսափելիորեն կապված են պետության անվտանգության ապահովման և սահմանադրական կարգի պահպանման հետ:

8. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների կանխարգելման միջոցների համակարգի օպտիմալացման ինքնուրույն ուղղորդման որակով անհրաժեշտ է դիտարկել վիկտիմաբանական (զոհի գործոնը) կանխարգելման միջոցների ներդրումը պրակտիկայում: Ի տարբերություն հանցագործության «ավանդական» կանխարգելմանը, որը նպատակաուղղված է դրա ածանցյալներին և հանցագործի անձին, վիկտիմաբանական կանխարգելման անկյունաքարում տեղադրում է տուժողի նկատմամբ աշխատանք՝ կողմնորոշված վիկտիմ վարքագծի կասեցմանը (երբ դա հնարավոր է) և դրա հետևանքների չեզոքացմանը, ինչը հիմք է հանդիսանում համարել վիկտիմաբանական կանխարգելումը քրեաբանության անվտանգության ապահովման ուղղություններից մեկը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում, //«Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», № 1-2 (102-103), 2009, էջ 103-109:

2. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության օբյեկտի հասկացությունը //«Դատական իշխանություն» գիտամեթոդական հանդես, 6 (155) «Դատավորների միություն» հրատ., Երևան 2012, էջ 15-19:

3. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության օբյեկտիվ կողմի հասկացությունը //«Օրինականություն» գիտամեթոդական հանդես, 72 (500) «Գլխավոր դատախազություն» հրատ., Երևան 2012, էջ 41-45:

4. Պետական քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտի հասկացությունը //«Միջազգային հարաբերություններ հայկական աշխարհ» գիտամեթոդական հանդես 1(5) «Անտեսոր» հրատ., Երևան 2012, էջ 52-54:

5. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ կողմի հասկացությունը //«Արդարադատություն» գիտամեթոդական հանդես, 2(17) Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ հրատ., Երևան 2012, էջ 26-30:

6. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգություն կատարած անձանց քրեաբանական բնութագիրը //«Դատական իշխանություն» գիտամեթոդական հանդես, 11-12/197-198, «Դատավորների միություն» հրատ., Երևան 2015, էջ 112-115:

7. Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունների կանխարգելման հիմնահարցերը //«Արդարադատություն» գիտամեթոդական հանդես, 4(31) Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ հրատ., Երևան 2015, էջ 58-61:

Давидян Давид Барисович
Уголовно-правовые и криминологические проблемы убийства государственного, политического или общественного деятеля в Республике Армения

Резюме

Одной из главных первоочередностей уголовной политики Армении является защита безопасности личности, общества и государства от всякого рода преступлений.

По этому поводу, как отмечено в указе президента РА, от 30-го июня 2012 года «Об утверждении списка мероприятий, исходящих из программы и стратегии правовых и судебных реформ 2012-2016гг. Республики Армении», необходимо принять новый уголовный кодекс Республики Армения и новую концепцию нового уголовного кодекса Республики Армения, так как в действующем уголовном кодексе есть множество законодательных пробелов и противоречий. Отмеченное замечание касается также “убийства государственного, политического или общественного деятеля” (статья 305 УК РА), - состава преступления, предусмотренного уголовной нормой, следовательно, также основных вопросов его уголовно-правовой квалификации.

Во время убийства государственного, политического или общественного деятеля преступник посягает не только на основы конституционного строя и безопасности государства, но и на жизнь человека, чем и обусловлена большая опасность этого преступления.

Объектом диссертации является комплексное изучение уголовно-правовых и криминологических особенностей состава убийства государственного, политического или общественного деятеля.

Предметом исследования является выявление уголовно-правовых особенностей состава преступления убийства государственного, политического или общественного деятеля, а также всестороннее исследование основных вопросов, связанных с усовершенствованием уголовно-правовых норм ответственности, предусмотренной за данное преступление, улучшение правоприменительной практики.

Научная новизна диссертации, в первую очередь, заключается в том, что она является одной из первых в теории отечественного уголовного права,

представляющая собой комплексное монографическое исследование, связанное с выявлением уголовно-правовых особенностей состава убийства государственного, политического или общественного деятеля, а также выроботку правил, связанных с квалификацией преступления.

В диссертации представлена авторская классификация мотивов убийства государственного, политического или общественного деятеля, а также особенности, связанные с освещением объективных и субъективных аспектов указанного состава преступления.

Научной новизной характеризуются также некоторые законодательные предложения. В частности, предлагается в названии и в диспозиции ст. 305 УК РА включить слова: “жизнь близких родственников”, в статьях 112 и 113 в качестве отягчающего обстоятельства включить признаки “в отношении государственного, политического или общственного деятеля” или же в УК включить новую статью - 305-1.

Теоретическая значимость диссертации заключается в том, что результаты исследования могут быть использованы будущими исследователями для дальнейшего развития теории уголовного права.

Практическая значимость работы заключается в том, что разработанные заключения, предложения и выводы могут способствовать усовершенствованию уголовного кодекса и улучшению правоприменительной практики. Результаты исследования могут быть использованы также во время преподавания следующих предметов “Уголовное право”, “Научные основы квалификации преступлений”, а также других специальных курсов.

Диссертация обобщается выводами, имеющими теоретическое и практическое значение.

David Baris Davidyan

Major criminal and forensic issues relating to the murder of the state, political or public figure in the Republic of Armenia

Summary

One of the major priorities of the criminal policy of Armenia is to protect the security of the individual, society and state from all kinds of crimes.

In this regard, as mentioned in the Decree of the President of RA of June 30, 2012, "About approval of the list of measures emanating from the programs and strategies of 2012-2016 of legal and judicial reforms of the Republic of Armenia", it`s necessary to accept the new "Criminal Code of the Republic of Armenia" and "The new concept of the new Criminal Code of the Republic of Armenia", as in the current criminal code there is a set of legislative gaps and adjustments. Mentioned remark also applies to "the murder of the state, political or public figure" (Article 305 of the Criminal Code of RA), crime stuff, foresee by the criminal norm, therefore, also the core issues of its criminal legal qualification.

The murder of the state, political or public figure is directed against the security of the state and the constitutional system, therefore, against the state government, the natural activity of the society, social and economic system, democratic principles and human rights and freedoms.

During the murder of the state, political or public figure the offender infringes not only on the basis of the constitutional system and security of the state but against a person's life, by which limited the great danger of the given crime.

The murder of the state, political or public figure can serve as a way of getting rid of political rivals, changes in domestic and foreign policy, the capture of the government and political incitement.

The object of the thesis is a comprehensive study of criminal law and forensic features of a crime of murder of state, political or public figure.

The subject of the study is to identify the criminal-law features of a crime of murder of state, political or public figure, as well as a thorough study of the major issues related to improving the criminal law liabilities provided for the given crime, improvement of law enforcement and the prevention of the above mentioned crimes.

The scientific novelty of this thesis, first of all, is that it is one of the first in the theory of domestic criminal law, which is realized as a comprehensive monographic study, related to the identification of criminal legal characteristics of a crime of murder of state, political or public figure, and also with an explanation of the social- legal aspects of social danger of the given crime.

In the thesis there formulated scientifically based proposals for certainty and improvement of the content of existing dispositions and sanctions of criminal law, to ensure

the security of the state, political or public figure, as well as to improve the validity of related qualification of the offense in law enforcement.

In addition, as a scientific novelty, in the thesis presents the author's classification of the motives for the murder of the state, political or public figure, and approaches related to the lighting of the objective and subjective aspects of this crime.

Scientific novelty are also characterized by several legislative proposals. In particular, it offered in the name and in the disposition of Art. 305 of RA Criminal Code to include the words; "The life is a close relative" in Articles 112 and 113 as the facilitates circumstances include the indication" against the state, political or public figure "or in the Criminal Code to include a new article - 305.1.

The theoretical significance of the thesis lies in the fact that the study results could be used by future researchers for the further development of the theory of criminal law.

The practical significance of the work lies in the fact that developed conclusions, proposals and inferences may contribute to the improvement of the criminal code and law enforcement. The study can also be used while teaching the following subjects "Criminal Law", "The scientific basis of the crime", as well as during special classes.

Thesis summarizes by the conclusions having theoretical and practical significance.